



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

17.02.2015թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 02/15

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 02567316) 29.01.2015թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-02/15 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով նշված բողոքը, «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի 10.02.2015թ. N 181 և 17.02.2015թ. N 182 գրությունները, «Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ի 02.02.2015թ. և 11.02.2015թ. N-075/7 գրությունները, ՀՀ առողջապահության նախարարության 10.02.2015թ. N ԱԿ/1237-15 գրությունը, «ԳՈՒԴ-ՇՀԱՊՁԲ-15/4-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, ԳԲԽ 02/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 16.02.2015թ. ներկայացրած եզրակացությունը հայտնում է հետևյալը.

1. «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 29.01.2015թ. ներկայացրած բողոքով «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) տեղեկացրել է, որ 02.02.2015թ. «Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՈՒԴ-ՇՀԱՊՁԲ-15/4-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի

մասը կազմող N1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրի 14-րդ չափաբաժնով սահմանվել է «Գեմցիտաբինի խտանյութ կաթիլաներարկման լուծույթի, 1000մգ, ապակե ֆլակոններ», որով Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում գրանցված է ընդամենը մեկ արտադրող ընկերություն:

«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն հայտնել է, որ խախտվել և չի պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, այն է՝ գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն խնդրել է «ԳՈՒԴ-ՇՀԱՊԶԲ-15/4-1» ծածկագրով ընթացակարգը 14-րդ չափաբաժնի մասով չեղյալ համարել:

Ընկերությունը 10.02.2015թ. N 181 գրությամբ Կենտրոնին տեղեկացրել է, որ Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող տեխնիկական բնութագրի 14-րդ չափաբաժնով սահմանված՝ «Գեմցիտաբին» դեղի տեխնիկական բնութագրում անհամապատասխանության վերաբերյալ 22.01.2015թ. գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարությանը (այսուհետ՝ նաև Նախարարություն)

Նախարարությունը «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի 22.01.2015թ. գրության վերաբերյալ հայտնել է, որ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) առկա են «Գեմցիտաբին 1000մգ.» բաղադրատարրով դեղի թվով 7 արտադրողների գրանցված տարբերակներ, ուստի բուժհաստատությունների կողմից որպես գնման առարկա հանդիսացող դեղի պահանջի առաջացման դեպքում, դեղի գնման հայտում և կից ներկայացվող տեխնիկական բնութագրերում պետք է ներառվեն պահանջվող դեղի Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) առկա գրանցված բոլոր արտադրողների ընդհանուր նկարագիրը:

«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն 17.02.2015թ. N 182 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ խնդրում է Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածում՝ տեխնիկական բնութագրում սահմանված 14-րդ չափաբաժնի մասով առկա անհամապատասխանության վերաբերյալ բողոքի քննարկման ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 02.05.2013թ. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները

հաստատելու մասին» N 502-Ն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետը, հաշվի առնել այն փաստը, որ «Գեմցիտաբին (դեղափոշի լիոֆիլացված, ն/ե ներարկման լուծույթի)» և «Գեմցիտաբին (խտանյութ ն/ե կաթիլաներարկման լուծույթի)» դեղաձևերի բժշկական օգտագործումը պարտադրում է ստանալ նույն դեղաձևը, այսինքն՝ ներերակային ներարկման լուծույթ: Ըստ Ընկերության կարևոր փաստ է նաև, որ միջազգային անատոմիական թերապևտիկ քիմիական (ATC) դեղերի դասակարգումով «Գեմցիտաբին (դեղափոշի լիոֆիլացված, ն/ե ներարկման լուծույթի)» և «Գեմցիտաբին (խտանյութ ն/ե կաթիլաներարկման լուծույթի)» դեղաձևերն ունեն նույն ծածկագիրը՝ L01BC05, որը փաստում է իրենց նույն դեղաձևը լինելու մասին (հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր)):

2. «Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ն 02.02.2015թ. գրությամբ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՈՒԴ-ՇՀԱՊԶԲ-15/4-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգն իրականացվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, մասնավորապես՝ գնման ենթակա ապրանքի համար ընթացակարգի - հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրի 14-րդ չափաբաժնով սահմանվել է դեղորայքի անվանումը՝ գեմցիտաբին, բնութագիրը՝ խտանյութ կաթիլաներարկման լուծույթի, 1000մգ, ապակե ֆլակոններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների հատկանիշները, բացառելով այլընտրանքային մեկնաբանություն: ՀՀ կառավարության 02.05.2013թ. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» N 502-Ն որոշման 3-րդ կետի համաձայն՝ դեղերի գնումների պլանում գնման առարկա հանդիսացող դեղի գնման տեխնիկական բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող դեղին ներկայացվող պահանջները:

Պատվիրատուն տեղեկացրել է, որ գնման ընթացակարգի շրջանակներում կատարվել է շուկայի ուսումնասիրություն և պարզվել է, որ գեմցիտաբին խտանյութ կաթիլաներարկման լուծույթը մի քանի անգամ էժան է նույն դեղորայքի դեղափոշի տարբերակից, ավելի հարմար օգտագործման համար, հետևաբար «Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ն պարտավոր չէ իմանալ, թե տվյալ տեխնիկական բնութագրի 14-րդ չափաբաժնով սահմանված վերը նշված դեղորայքից քանի ընկերություն են ներմուծում Հայաստանի Հանրապետություն:

Պատվիրատուն նշել է նաև, որ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի Կենտրոնին նույն բովանդակությամբ ներկայացրած բողոքը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 17.09.2014թ. որոշմամբ մերժվել է:

Պատվիրատուն 11.02.2015թ. N-075/7 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ԳՈՒԴ-ՇՀԱՊԶԲ-15/4-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի N 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրի 14-րդ չափաբաժինը (գեմցիտաբին, խտանյութ կաթիլաներարկման լուծույթի, 1000մգ, ապակե ֆլակոններ) կազմվել է՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանին (ռեեստր) համապատասխան: Ըստ Պատվիրատուի՝ այդ գրանցամատյանում գրանցված են մոտ 4500 դեղորայքի անվանում և յուրաքանչյուր դեղի համար տեխնիկական բնութագիր կազմելիս հնարավոր չէ այն կազմել յուրաքանչյուր արտադրողի գրանցված տարբերակի համաձայն: Շատ հնարավոր է գնման գործընթացին զուգահեռ դեղերի պետական գրանցամատյանում ևս մի քանի արտադրող ընկերություններ գրանցվեն իրենց տարբեր տեխնիկական բնութագրերով:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմված տեխնիկական բնութագիրը կազմվել է ՀՀ կառավարության 02.05.2013թ. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» N 502-Ն որոշման 3-րդ կետի համաձայն՝ դեղերի գնումների պլանում գնման առարկա հանդիսացող դեղի գնման տեխնիկական բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող դեղին ներկայացվող պահանջները, որտեղ տվյալ

դեպքում գնման առարկա հանդիսացող դեղորայք է հանդիսանում «Գեմցիտաբին, խտանյութ կաթիլաներարկման լուծույթի 1000մգ., ապակե ֆլակոններ» դեղը:

Ըստ Պատվիրատուի՝ Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն առաջին անգամ չէ, որ ուզում է ձախողել գնման գործընթացը՝ նպատակ դնելով ամեն կերպ վաճառել իր դեղորայքը:

3. ԳԲԽ-02/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն»

ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 16.02.2015թ. եզրակացությունը և առաջարկել է «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի 29.01.2015թ. ներկայացրած բողոքը մերժել:

4. ԳԲԽ-02/15 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաս-

տերը

ԳԲԽ-02/15 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳՈՒԴ-ՇՀԱՊԶԲ-15/4-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի N 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրի 14-րդ չափաբաժնով սահմանվել է ապրանքատեսակի բնութագիրը՝ խտանյութ կաթիլաներարկման լուծույթի, 1000մգ., ապակե ֆլակոններ, չափման միավորը՝ ֆլակոն:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի 29.01.2015թ. ներկայացրած բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 18-րդ և 19-րդ կետերով սահմանվում են «գնման առարկա» և «գնման առարկայի բնութագիր»

հասկացությունները, մասնավորապես այդ կետերի համաձայն՝ գնման առարկան հանդիսանում է գնվող ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը, իսկ գնման առարկայի բնութագիրը կազմում է գնման առարկայի հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի «գ» կետի համաձայն՝ դեղաձևը՝ սահմանված բաղադրակազմով, գործածման համար որոշակի ձևով դեղահատեր, հաբեր, պատիճներ, կաթիլներ, սրվակներ, ներարկման հեղուկներ և այլն, կայուն ագրեգատային վիճակով (պինդ, մածուցիկ, հեղուկ, գազանման), ֆիզիկական և քիմիական հատկանիշների համալիր բնութագրով օժտված թողարկման ձև է:

ՀՀ կառավարության 02.05.2013թ. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» N 502-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 3-րդ կետի համաձայն՝ դեղերի գնումների պլանում գնման առարկա հանդիսացող դեղի գնման տեխնիկական բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող դեղին նույն Որոշմամբ ներկայացվող պահանջները:

Որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ դեղաձևը նշելիս հիմք է ընդունվում «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի «գ» կետով սահմանված դեղաձևերը (օրինակ՝ դեղահատ, հաբ, պատիճ, կաթիլ և այլն (հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր)):

ՀՀ առողջապահության նախարարի 04.04.2014թ. N 10 հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանի (ռեեստր) աղյուսակի 3-րդ՝ միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները սյունակում գրանցված «Գեմցիտաբին» անվանմամբ դեղի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ տվյալ դեղի համար

ռեեստրի 4-րդ՝ դեղաձևը սյունակում նախատեսված են տարբեր դեղաձևեր՝ դեղափոշի լիոֆիլացված ն/ե ներարկման լուծույթի և խտանյութ կաթիլաներարկման լուծույթի:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը նույնանման փաստական հանգամանքներով կայացրել է հետևյալ որոշումները.

11.06.2014թ. ԳԲԽ-18/14 որոշմամբ Խորհուրդը բավարարել է «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի բողոքը: Նշված գործով «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն բողոքով տեղեկացրել է, որ «Վազա-Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանել «ՈՒԱԿ-ՇՀԱՊԶԲ-11/4-4» ծածկագրով ընթացակարգի տեխնիկական բնութագրի պահանջներին, որով սահմանված է եղել՝ «Գեմցիտաբին (գեմցիտաբինի հիդրոքլորիդ) դեղափոշի լիոֆիլացված, ն/ե ներարկման լուծույթի» գնման ենթակա ապրանքը, մինչդեռ՝ «Վազա-Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Գեմցիտաբին (գեմցիտաբինի հիդրոքլորիդ) դեղափոշի լիոֆիլացված, ն/ե ներարկման լուծույթի կամ խտանյութ ն/ե կաթիլաներարկման լուծույթի»: «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ը գտել է, որ գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պահանջները, քանի որ «Վազա-Ֆարմ» ՍՊԸ-ն չէր կարող հաղթող ճանաչվել և պայմանագիր կնքելու առաջարկ ստանալ՝ հայտը հրավերի պահանջներին չբավարարելու հիմքով: Վերոհիշյալ բողոքով «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն խնդրել է դադարեցնել ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՈՒԱԿ-ՇՀԱՊԶԲ-11/4-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Վազա-Ֆարմ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները: Խորհուրդն իր 11.06.2014թ. ԳԲԽ-18/14 որոշմամբ գտել է, որ պատվիրատուն, «Վազա Ֆարմ» ՍՊԸ-ին որպես Ընթացակարգի հաղթող (ընտրված մասնակից) ճանաչելով, խախտել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը, ուստի Խորհուրդը բավարարել է «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 23.05.2014թ. Կենտրոնին ներկայացված բողոքը և դադարեցրել է ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՈՒԱԿ-ՇՀԱՊԶԲ-11/4-4» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի կողմից «Վազա-Ֆարմ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

17.09.2014թ. ԳԲԽ-31/14 որոշմամբ Խորհուրդը մերժել է «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի բողոքը: Մասնավորապես, վկայակոչված գործով «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն Կենտրոնին 29.08.2014թ. ներկայացրած բողոքով տեղեկացրել է, որ 29.08.2014թ. «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-6» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող տեխնիկական բնութագրի 1-ին չափաբաժնով սահմանվել է «Գեմցիտաբինի (գեմցիտաբինի հիդրոքլորիդ) խտանյութ ն/ե կաթիլաներարկման լուծույթի՝ 1000մգ/100մլ, 100մլ ապակե սրվակ» դեղատեսակը, որով Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում գրանցված է ընդամենը մեկ արտադրող ընկերություն: «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն հայտնել է, որ խախտվել և չի պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, այն է՝ գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար: Հետևաբար, «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն խնդրել է «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-6» ծածկագրով ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով չեղյալ համարել: Խորհուրդն իր 17.09.2014թ. ԳԲԽ-31/14 որոշմամբ գտել է, որ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-6» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող տեխնիկական բնութագիրը 1-ին չափաբաժնի մասով կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, որտեղ ամբողջությամբ և հստակ նկարագրվել են ձեռքբերվող ապրանքի հատկանիշները, բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը և հնարավոր մասնակիցների գնման գործընթացին մասնակցելու համար մրցակցության անհավասար պայմանները:

Ինչ վերաբերում է ՀՀ առողջապահության նախարարության 10.02.2015թ. ԱԿ/1237-15 գրությամբ հայտնած պաշտոնական դիրքորոշմանը, որ Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածում՝ տեխնիկական բնութագրում, 14-րդ չափաբաժնով սահմանված «Գեմցիտաբին» ապրանքատեսակի բնութագրում պետք է ներառվեն ՀՀ առողջապահության

նախարարության 04.04.2014թ. N 10-Ն հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) (այսուհետ՝ Գրանցամատյան) առկա «Գեմցիտաբին 1000մգ.» բաղադրատարրով դեղի գրանցված թվով 7 արտադրողների ընդհանուր նկարագիրը (գրանցված տարբերակները), ապա վերոհիշյալ դիրքորոշման հիմքում դրվել է Որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետը, որը վերաբերում է դեղի միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումներին: Մինչդեռ, «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի առարկան դեղաձևն է, որին վերաբերող պահանջները սահմանված են Որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետով:

ՀՀ կառավարության 02.05.2013թ. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» N 502-Ն որոշման 3-րդ կետի համաձայն՝ դեղերի տեխնիկական բնութագրերի տարր է հանդիսանում նաև դեղաձևը (օրինակ՝ դեղահատ, հաբ, պատիճ, կաթիլ և այլն (հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր)):

Այսպիսով, ՀՀ առողջապահության նախարարության 10.02.2015թ. ԱԿ/1237-15 գրությամբ հայտնած դիրքորոշումը վերաբերում է դեղի միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումներին, իսկ բողոքի առարկան դեղաձևն է:

Բացի այդ, «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն Կենտրոնին 23.05.2014թ. ներկայացված բողոքով հայտնել է այն դիրքորոշումը, ըստ որի՝ «լիոֆիլացված դեղափոշին և խտանյութը տարբեր դեղաձևեր են»:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի 29.01.2015թ. ներկայացրած բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող տեխնիկական բնութագրի 14-րդ չափաբաժնով գնման ենթակա դեղի դեղաձևին ներկայացվող պահանջները համապատասխանում են ՀՀ օրենսդրության պահանջներին, որով ամբողջությամբ և հստակ նկարագրվել են ձեռքբերվող ապրանքի հատկանիշները, բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը և հնարավոր մասնակիցների գնման գործընթացին մասնակցելու համար մրցակցության անհավասար պայմանները:

Բացի այդ, «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց, որով կհիմնավորվեր այն փաստը, թե Հայաստանի Հանրապետությունում ընդամենը մեկ ընկերության արտադրության դեղ գրանցված լինելու հանգամանքը կարող է ստեղծել ընկերության համար մրցակցության անհավասար պայմաններ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 29.01.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը մերժել:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Անդամներ՝



Նարինե Նիկողայան



Արամ Գրիգորյան